ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4. 1946 *Общественные науки*

ԻՐԵՎԻԼԱԿԻՆ ԼԵԶՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ՄԻՍԱԿ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Գերմանացիների կողմից օկուպացված Փարիզում, իր մարտական 23 ընկերների հետ գեստապոյի ֆաշիստական գնդաններում անտանելի խոշտանգումների ենթարկվելուց հետո 1944 թ. փետրվարի 21-ին գնդակահարվեց ֆրանսահայ աշխատավորության հակաֆաշիստական պայքարի կազմակերպիչներից մեկը՝ Ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատների հրամանատար Միսակ Մանուշյանը։

Միսակ Մանուշյանը (ընդհատակյա անունը Միշել Ժորժ) ծնվել է 1910 թ. Թյուրքիայի Ագիյաման քաղաքում, չքավոր այգեգործի ընտանիքում։ 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի տարիներին տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ զոհվում են նրա ծնողները։ Գատահականորեն ազատվելով կոտորածից, Մանուշյանը իր մեծ եղբոր հետ գաղթում է Սիրիա, ուր ընդունվում է Ճյունիե քաղաքի Հայկական Բարեգործական Ընկերության որբանոցը։

Մանուշյանը սկզբնական կրթությունն ստանում է որբանոցում, ուր աչքի է ընկնում ուշիմությամբ և աշխատասիրությամբ։ Որբանոցում նա հանդես է բերում արտակարգ ընդունակություններ։ Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու առաջին իսկ օրից Սովետական Հայաստան մեկնելու ցանկությունը դառնում է Մանուշյանի և արտասահմանում ապրող բազմահազար հայ որբերի փայփայած իղձը։ Բայց հակառակ նրանց ցանկություններին, 1925 թվականին Սիրիայի հայ որբերին հատուկ պայմանագրությամբ տանում են Ֆրանսիա՝ իբրև էժան բանվորական ուժ աշխատեցնելու կապիտալիստական գործարաններում։

Ֆրանսիայում Մանուշյանն աշխատանքի է անցնում Փարիզի Սիտրոեն ավտոմոբիլային գործ—արանում իբրև տոկար։ Այստեղ Մանուշյանը մոտիկից շփվելով բանվորական լայն մասսաների հետ, ծանոթանում է նրանց կյանքին, նրանց միջավայրին, նրանց հետ միասին մասնակցում է գործադուլներին և քաղաքական ցույցերին։ Այս հանգամանքը Մանուշյանի աշխարհայացքի կազմակերպման և հասարակական-քաղաքական գործունեության վրա մեծ ազդեցություն է ունենում։ Գործարանում աշխատելուն զուգընթաց նա Փարիզում համառությամբ զբաղվում է իր կրթական մակարդակի բարձրացման վրա։ Հաճախում է Փարիզի ամենախոշոր գրադարանները, ուսումնասիրում է գրականություն և հասարակական գիտություններ։ Այս շրջանումն է, որ նա գրում է մի շարք արժեքավոր, զողարիկ բանաստեղծություններ և օչերկներ։

1928 թվին վրա է հասնում կապիտալիստական արդյունաբերական ճգնաժամը։ Մանուշյանը տասնյակ-հազարավոր բանվորների հետ միասին փողոց է շպրտվում և մնում է գործազուրկ։ Չնայած այդ ծանր պայմաններին, նա չի կարվում իր ինքնակրթության աշխատանքներից։ Նա,

գրականությամբ զբաղվելուն զուգընթաց, ամբողջ կրքոտությամբ նվիրվում է մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի ուսումնասիրմանը։ 1934 թվականին Մանուշյանն ընդունվում է ֆրանսիական կոմպարտիայի շարքերը։

Ֆրանսահայ կոմունիստների պարտիական կենտրոնի հանձնարարությամբ, 1935 թվականից սկսած՝ Մանուշյանը չորս տարի շաբաթական խմբագրում է Փարիզում հայերեն լեզվով լույս տեսնող բանվորական «Զանգուն» շաբաթաթերթը, որի էջերից նա հավատորեն պայքար է մղում ֆաշիզմի և հայ ժողովրդի թշնամի դաշնակների դեմ, պաշտպանում է Սովետական Միությունը, Սովետական Հայաստանը թշնամիների կեղտոտ հարձակումներից։

1938 թվականին Մանուշյանի և նրա ընկերների նախաձեռնությամբ Ֆրանսիայում հիմնադրվում է «Ֆրանսահայ ժողովրդական միություն» առաջադիմական մասսայական մի կազմակերպություն, որի մասնաճյուղերը տարածվում են ամբողջ Ֆրանսիայում։ Այդ շրջանում Մանուշյանը կարդում է զեկուցումներ, վառվռուն ելույթներ է ունենում հայաբնակ վայրերում, կազմակերպում է հայ աշխատավորությանը, դառնում է նրանց ամենասիրելի և հանրածանոթ գործիչը, կոմպարտիայի ղեկավար աշխատողներից մեկը։

1939 թվականի սեպտեմբերին, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակում գործեց Ֆրանսիայի վրա, Մանուշյանը, որպես կոմունիստ, մեկնեց ճակատ գերմանական ֆաշիստների դեմ կռվելու համար։ Սակայն պատերազմը երկար չի տևում, ներքին դավաճանության միջոցով Ֆրանսիան պարտվում և կապիտուլացվում է։ 1940 թ. դինադադարից հետո Մանուշյանը զորացրվելով, ռազմաճակատից վերադառնում է գերմանացիների կողմից արդեն օկուպացված Փարիզ և կոմպարտիայի առաջադրանքով անմիջապես անցնում է ընդհատակյա աշխատանքի։ 1941 թ. հունիսին Մանուշյանը ձերբակալվում և ուղարկվում է գեստապոյի Կոմպիենի համակենտրոնացման ճամբարը, որտեղից նա «Ցուժանիտեի» խմբագիր Ժորժ Կոնիոյի ակտիվ ջանքերով հանդուգն և համարձակ փախուստ է կատարում և վերադառնում ընդհատակյա պարտիական աշխատանքների։

Մանուշյանը և իր ընկերներն իրենց ամբողջ ուժն ու եռանդը նվիրում են Ֆրանսիայի ներքին ընդդիմադիր ուժերի կազմակերպման գործին և իրենց շուրջն են համախմբում հայկական առաջադիմական կազմակերպությունները, բոլոր հայրենասերներին, հիմնում են «Հայ ազգային ճակատ»։ Ընդհատակում նրանք լույս են ընծայում «Ժողովուրդ», «Ազատություն» և այլ հայերեն թերթեր, որոնց էջերում մերկացնում են ֆրանսիական դավաճան, ծախված կառավարությանը և դաշնակ թափթփուկների ստոր դավաճանական արարքները, կոչ են անում ժողովրդին՝ սաբոտաժի ենթարկել ֆաշիստական իշխանությունների աշխատանքները և պայքարի ելնել օկուպանտների դեմ։

1942 թ. վերջերից ֆրանսիական կոմպարտիայի ղեկավարությամբ զինված պայքար է սկսվում ֆաշիզմի դեմ։ Փարիզում և Ֆրանսիայի տարբեր մասերում ստեղծվում են ազատ հրաձիգ պարտիզանների կազմակերպություններ։ Այս շարժումն ուներ իր ազգային կենտրոնը և ռազմական հրամանատարությունը։ Հայ կոմունիստները և հայ աշխատավորները ամենաջերմ կերպով արձագանքում են այդ շարժմանը։ Մանուշյանը իր ակ-

տիվ նախաձեռնությամբ հայ հայրենասերներից կազմակերպում է պարտիզանական ջոկատ, որը իր մի շարք հաջող մարտական գործողություններով վարակիչ օրինակ է դառնում Փարիզում և նրա շրջակայքում գործող պարտիզանական ջոկատների համար։ Ֆրանսիական ազատ հրաձիգ պարտիզանների ազգային կոմիտեն Մանուշյանին առաջ է քաշում և նշանակում Փարիզում և նրա շրջակայքում գործող պատիզանների ինտերնացիոնալ ջոկատների հրամանատար, որոնց շարքերում ընդգրկված էին լեհեր, իտալացիներ, իսպանացիներ, ֆրանսիացիներ, հայեր և այլն։ Մանուշյանի պարտիզանական խումբը բաժանված էր չորս ջոկատի, որոնք կրում էին «Ստալինգրադ», «Վիկտոր Հյուգո», «Ազատություն» և «Զապաև» անունները։ Այս ջոկատները, Մանուշյանի հաջող պլաններով և խնամքով ձեռք բերված հետախուզության տվյալներով, կարճ ժամանակամիջոցում կատարում են մոտ 60 դիվերսիոն և տեռորիստական ակտեր։ 1943 թվականի ամառը Մանուշյանը կազմակերպում է հայտնի ֆաշիստական դահիճ Ռիտտերի, ինչպես նաև գեներալ ֆոն Շոենբուրգի սպանությունը։

Նրա ջոկատները տասնյակ անգամներ հարձակումներ են կատարում և ավերում զորանոցները, ռումբեր են նետում զորքի համախմբումների, ավտոշարասյան և ռազմական օբեկտների վրա, սպանում են հարյուրավոր ֆաշիստական օկուպանտներ, օֆիցերներ և զինվորներ։ Տասնյակ անգամներ հոգս են ցնդեցնում զինվորական էշելոնները՝ բարձված զորքով, տանկերով, թնդանոթներով և սպառազինությամբ։ Մանուշյանի պարտիզանները կատաղի կերպով կռվում էին նաև ներքին դավաճանների դեմ և ոչնչացնում նրանց։ Մանուշյանի և իր պարտիզանների համբավը տարածվել էր ամբողջ Ֆրանսիայում։

1943 թ. նոյեմբերի 16-ին Մանուշյանը սովորական ձևով գնում էր ժամադրավայրը՝ իր պարտիզաններին հանդիպելու և հերթական առաջադրանք տալու, բայց ստոր մատնությամբ գեստապոյի կողմից տեղնուտեղը ձերբակալվում է։ Նույն օրը ձերբակալվում են նաև նրա մի շարք ընկերները։

Ֆաշիստները Մանուշյանին և իր ընկերներին երեք ամիս շարունակ սոսկալի տանջանքների ենթարկելով՝ պահում են Փարիզի Ֆրենի բանտում։ Նրանց ենթարկում են դաժան ծեծի և խոշտանգումների, որի հետևանքով ջարդվում է Մանուշյանի այտոսկրը և աչքը կուրանալու աստիճանի փնասվում է, սակայն նա մնում է անհողդողդ և աննկուն։ Ֆրանսիական հայրենասերները ոգևորվում են նրա արիությամբ։ Ֆրանսիական Ալժիրի կառավարությունը Մանուշյանին, նրա մատուցած ծառայությունների համար, արժանացնում է պատվո լեգեոնի ասպետի կոչման։

1944 թ. փետրվարի 16-ից մինչև 20-ը Փարիզում ֆաշիստական զինվորական տրիբունալը իր չորս երկար նիստերում քննում է Մանուշյանի և նրա ընկերների գործը։ Դատարանում Մանուշյանը իր դահիճների երեսին, առանց վախենալու, բացեիրաց հայտարարում է, որ ինքը, լինելով ազատության բանակի զինվոր և պարտիզանների ղեկավար, նպատակ է ունեցել ոչնչացնել գերմանական ֆաշիստ օկուպանտներին։

1944 թ. փետրվարի 20-ին Փարիզի ֆաշիստական զինվորական տրիբունալը Մանուշյանին և նրա 23 մարտական ընկերներին դատապարտում է գնդակահարության։ Մեկ օր հետո, փետրվարի 21-ին Փարիզի Մոն Վալերիանում դատավճիռն ի կատար է ածվում։

* * *

Ստորև հրատարակում ենք Մ. Մանուշյանի մասին մի շարք արխիվային նյութեր։ Առաջին փաստաթուղթը Մանուշյանի ղեկավարությամբ գործող պարտիզանական ջոկատներից մեկի մարտական գործունեության օրագրի մեզ հասած մի մասն է։ Երկրորդը՝ բանտից Մանուշյանի գրած նամակն է իր կնոջը։ Երրորդ և չորրորդ փաստաթղթերը Մանուշյանի պարտիզանական գործունեությունը բնութագրող այն վկայագրերն են, որոնք տրված են ֆրանսիական կազմակերպությունների կողմից։

Նշված բոլոր փաստաթղթերի օրիգինալները ֆրանսերեն են և պահվում են ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվում։

Ե. ԽԱԼԵԹԱՆ

№ 1

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԿԱՊԻՏԱՆ ՄԱՆՈՒՇՅԱՆԸ

Հունիս 1943 թ.

1 հունիսի, ժամը 22 անց 30.—Երեք հոգուց բաղկացած մի խումբ (արձանագրվածներ՝ 10318, 10018 և 10315[1]), զինված ատրճանակներով և նռնակներով, ժորես մետրո կայարանի մոտերքը երկու անգամ երկու նռնակներով հարձակվեց 60—70 հոգուց բաղկացած մի ջոկատի վրա, որը գնում էր դեպի զորանոցը։ Նռնակները պայթեցին ջոկատի կենտրոնում. հակառակորդն հրաձգությանը և հետապնդումներին, խումբը հեռացավ առանց ֆնասի։

3 հունիսի, ժամը 19-ին.—Երեք հոգուց բաղկացած մի խումբ (արձանագրվածներ՝ 10305, 10313 և 10311), զինված ատրճանակներով և նռնակներով, հարձակվեց Միրաբո փողոցով անցնող գերմանական նավաստիներով լցված մարդատար մի ավտոմեքենայի վրա. բազմաթիվ սպանվածներ և վիրավորներ մնացին տեղում։

Զեռքի գնդացիրով զինված մի նավաստի խփվեց մեր պաշտպանության կողմից։

Մի այլ մարդատար ավտոմեքենայից իջած գերմանացիների կրակից վիրավորվեց և վախճանվեց մեր ընկերներից մեկը և ընկավ թշնամու ձեռքը։

Նա քաջությամբ և անձնազոհությամբ կատարեց պարտիզանի իր պարտքը։

19 հունիսի, ժամը 7 անց 30.—Երեք հոգուց բաղկացած մի խումբ (արձանագրվածներ՝ 10018, 10318 և 10308), զինված ատրճանակներով և նռնակներով, հարձակվեց Վանվ եկեղեցու (Պտի մենաժ մետրոյի) մոտ գերմանական նավաստիների ապրանքատար մի ավտոմեքենայի վրա։ Նռնակը պայթեց ավտոմեքենայի մեջ։ Ամբողջ խումբը հեռացավ առանց կորուստի։

22 հունիսի, ժամը 13-ին.—Չորս ընկերներից բաղկացած մի խումբ (արձանագրվածներ՝ 10016, 10315, 10318 և 10010), զինված ատրճանակներով ու

[1] Կոնսպիրացիայի կանոնների համաձայն՝ պարտիզանները իրենց անունների փոխարեն արձանագրվում էին պայմանական թվերով։ Ն. Խ.

նոնակներով, Գուվյոն Սեն-Սիր բուլվարում նոնակով հարձակվեց գերմանացի ոստիկաններով բեռնավորված ապրանքատար մի ավտոմեքենայի վրա։ Այս գործողության մեջ հատկապես աչքի ընկավ խմբի ինքնապաշտպանությունը քաջությամբ, ձեռներեցությամբ և արդյունավետությամբ։

Օրինակ՝ 10016 արձանագրված ընկերը նոնակը մեկ անգամ նետելով՝ վազելով սկսեց ետ քաշվել մի փոքրիկ փողոցով դեպի պաշտպանության առաջին գիծը։ Նույն միջոցին երկու հրդեհաշեջներ, որոնք նոր էին կանգ առել իրենց հեծանիվներով մայթի եզրին, նկատելով այդ, հեծանիվները նստելով՝ սկսեցին հարևան փողոցով հետապնդել մեր ընկերոջը, նպատակ ունենալով կտրելու նրա նահանջի ճանապարհը։ 10313 արձանագրված ընկերը հասկանալով այս շարժումը, ետևի կողմից ընկերոջ նահանջը պաշտպանելու փոխարեն, ուժգնորեն իրեն գցեց առաջ, նոնակ նետողից առաջ անցավ և ատրճանակը ձեռքին դուրս եկավ հեծանվորդների դեմ։ Հեծանվորդներն այս սպառնալիքին հանդիպելով ետ քաշվեցին։ Մի ուրիշ անցորդ, որ նույնպես փորձեց խանգարել նահանջը, նույն սպառնալիքին հանդիպեց։ Մեր բոլոր ընկերները վերադարձան անվնաս, իրենց զենքերով։

26 հունիսի, կեսօրին.—Երեք հոգուց բաղկացած մի խումբ (արձանագրված՝ 10318, 10308, 10307), կեսօրին, ատրճանակները ձեռքներին ներս թափանցեցին մի դավաճանի բնակարան՝ նրան սպանելու։ Որոնվող անձնավորությունը տանը չգտնվելու պատճառով գործողությունը տեղի չունեցավ. որովհետև թաղում ահազանգ էր տրված, ընկերները ինքնապաշտպանության դիմեցին, կրակեցին իրենց հետապնդող ոստիկանների վրա։ Մի ոստիկան ե մի քաղաքացի, որոնք փորձեցին խանգարել նահանջը, տեղն ու տեղը սպանվեցին մեր ընկերների գնդակից։

Երրորդ ջոկատ

7 հունիսի, ժամը 10-ին.—Երեք հոգուց բաղկացած մի խումբ (արձանագրված՝ 10251, 10279, 10233), զինված ատրճանակներով և նոնակներով, սպանեցին Մասբերո (16) փողոցի № 4 բնակարանում ապրող գերմանացի մի գեներալի այն ժամանակ, երբ նա պատրաստվում էր նստել իր ավտոմեքենան. ավտոմոբիլի շոֆերը ատրճանակից կրակելով նետվեց հետապնդելու մեր ընկերներին, բայց սա չխանգարեց մեր խմբին ետ քաշվելու կանոնավոր և առանց կորուստի։

10 հունիսի. ժամը 9-ին.—Երեք մարդ (արձանագրված՝ 10243, 10233 և 10222), զինված նոնակներով և ատրճանակներով, մեկ նոնակով հարձակվեցին Բադիյո փողոցի իտալական ֆաշիստական պարտիայի կենտրոնական շենքի վրա, ուր նույն օրը պետք է տեղի ունենար Իտալիայի՝ պատերազմի մեջ մտնելու տարեդարձի հանդեսը։ Նոնակը պայթեց շենքի ներսում։ Ամբողջ խումբը վերադարձավ առանց վնասի։

15 հունիսի, ժամը 10 անց 30.—Երեք մարդուց բաղկացած մի խումբ (արձանագրված՝ 10216, 10280 և 10287), ատրճանակներով և նոնակներով զինված, հարձակվեց Արժանթեոյում գերմանական մի ջոկատի վրա։ Հակառակ առջևից և ետևից կատարվող պահակային հսկողությանը, նոնակը նետվեց ջոկատի կուտակման մեջտեղը։

Բնակչության մեջ տարածված լուրերի համաձայն՝ ջոկատի հաժարյա կեսը ֆնասվել է։ Նահանջը կատարվեց հեծանիվներով, արագ կերպով, և առանց դժբախտ դեպքի։

16 հունիսի, ժամը 23-ին.—Երեք ընկերներից բաղկացած մի խումբ (արձանագրվածներ՝ 10279, 10247 և 10287), զինված ատրճանակներով և նռնակներով, մեկ նռնակով հարձակվեցին Անովր փողոցի № 4 մի իտալացի ֆաշիստի բնակարանի վրա, ուր հաճախում էին միայն գերմանացիները. պայթյունը տեղի ունեցավ բնակարանի ներսում և պատճառեց շատ զոհեր, որոնց մեջ նաև տան տերը։

Թաղամասը չափազանց ռազմականացած լինելով, տեղի ունեցավ բուռն հրաձգություն և հետապնդում։ Մեր ընկերները վերադարձան առանց կորուստի։

20 հունիսի, ժամը 10-ին.—Երկու մարդ (արձանագրվածներ՝ 10221 և 10214), զինված ատրճանակներով, մտան մի դավաճանի տուն նրան սպանելու։ Սպանությունը տեղի չունեցավ, որովհետև մի թերության պատճառով ատրճանակը չկրակվեց։ Մեր ընկերները հաջող կերպով ետ քաշվեցին։

23 հունիսի, ժամը 11-ին.—Երեք հոգուց բաղկացած մի խումբ (արձանագրվածներ՝ 10279, 10233 և 10253) մեկ նռնակով հարձակվեցին գերմանական մի մեծ ջոկատի վրա. Ռուեյ Մալմեզոնում։ Այս գործողությունը ավելի հանդուգն և էֆեկտավոր էր այն չափով, որ ջոկատը հարձակման էր ենթարկվել օրը ցերեկով, քաղաքի կենտրոնում և բուն իսկ զորանոցում, ժամապահի կողմից հսկվող գլխավոր մուտքի մոտ։

Խոսքը մի մեծ զորանոցի, զինվորական մի իսկական միջնաբերդի մասին է, բազմաթիվ շենքերով, որտեղ գերմանացիները երկյուղ կրելով պարտիզաններին հանդիպելուց, իրենց վարժությունները կատարում էին ներսում։

Աշխատանքների վերջում, ժամը 11-ին, երգելով, ներքին բակերի միջից գալիս էին դեպի ճաշարան։ Այդ ժամանակ մի ջոկատ կանգ է առնում ցանկապատին մոտիկ, հարյուր յարդ հեռավորության վրա. մեր ընկերները այդ մոմենտին մի նռնակ նետեցին կանգնած ջոկի միջտեղը և հեծանիվներով հեռացան։ Բնակչության մեջ տարածված լուրերի համաձայն՝ այդ վրեժխնդրության ժամանակ նետված նռնակը թշնամուն պատճառել է 30 զոհ։

Գերմանացիների զինված մոտոցիկլետիստները նետվեցին հետապնդելու մեր ընկերներին, բայց ոչ մի արդյունքի չհասան։ Մեր ընկերները անփաս վերադարձան։

23 հունիսի, ժամը 23-ին.—Երկու խումբ, բաղկացած ընդամենը հինգ մարդուց (արձանագրվածներ՝ 10263, 10221, 10215, 10241 և 10214), զինված ձեռքի գնդացիրով, ատրճանակներով և նռնակներով, կազմակերպեցին մի իսկական ռազմական հանդուգն գործողություն՝ գերմանական ժանդարմների գիշերային պահակախմբի դեմ. ժանդարմները զինված էին ձեռքի գնդացիրներով, ատրճանակներով և ունեին հեծանիվներ։ Գործողությունը տեղի ունեցավ Սաննուայում՝ ազգային ճա-

նապարհի վրա։ Չորս ընկերներ՝ մի դնդացրորդ, երկու նռնաձիգ, մի հրաձիգ դիրք են մտնում, իսկ հինգերորդը, որը հեծանիվով էր, աշխատում էր որպես հետախույզ դիշերապահների գալը իմաց տալու համար։ Ժամը 22-ն անց ժանդարմների գալու ազդանշանը տրվեց. այն միջոցին, երբ գերմանական գիշերային պահակը, բաղկացած մեկ ենթասպայից և երկու ժանդարմից, մեր լավ քողարկված ընկերների բարձունքին հասան, ձեռքի դնդացրի մի համազարկից նրանք պառկեցին գետնին—նրանցից երկուսը խփվեցին, երրորդը վախից փորձեց սողոսկել փոսի երկարությամբ, բայց սպանվեց դիրքի վերջին պոստը գրավող մեր ընկերոջ ատրճանակի գնդակներից։ Նույն ժամանակ թեթև վիրավորված ենթասպան ուշքի գալով՝ վերցրեց իր ձեռքի գնդացիրը և ուղղեց դեպի մեր ընկերները, բայց մեր ձեռքի դնդացրի մի երկրորդ համազարկից սպանվեց։

Երկրորդ համազարկից անմիջապես հետո, երկու նռնաձիգները նետելով իրենց երկու նռնակները, պատրաստվում էին դուրս գալու իրենց դիրքերից, որպեսզի բոշերի զենքերը վերցնեն։ Բայց որովհետև նռնակներից մեկը չէր պայթել, ուստի խմբի պետը զգուշանալով և վախենալով, որ կարող է դժբախտ դեպք տեղի ունենալ, հրամայեց հետ քաշվել։

Մեր բոլոր ընկերներն իրենց սպառազինությամբ և ռազմական պարագաներով անվնաս վերադարձան իրենց տեղերը։

Այս գործողությունը շատ լավ ընդունելություն գտավ, նկատի ունենալով այն սարսափը, որ այս երեք ժանդարմները տարածում էին շրջանում, որտեղ նրանք համարվում էին ոստիկանական ագենտներ։

Հարկավոր է նշել այս գործողության զինվորական բարձր բնույթը թե նախապատրաստման, թե գործողության կատարման և թե նահանջի ընթացքում։

Պարտիզանների կողմից ոչ մի թերացում չեղավ. մենք հատկապես նշում ենք այս գործողության ղեկավարի հատկությունները, որն ապահովում էր դնդացրորդի պոստը և ինչպես Բրյումել փողոցի գործողության ժամանակ, իր քաջությամբ և սառնասրտությամբ ապահովեց հաջողությունը։

24 հունիսի, ժամը 11-ին.—Երրորդ ջոկատից երեք մարդ (արձանագրվածներ՝ 10251, 10228, 10247) մի նռնակ նետեցին գերմանացի սպաների մի խմբի մեջ, որոնք նոր էին կանգ առել Մորիս Բարես № 96 (Նեոիում) գերմանացիների կողմից գրավված մի տան պարտեզում։ Նռնակը պայթեց սպաների խմբի մեջ, բոլորը ծանր կերպով վիրավորվորվեցին։ Հայտնի չէ՝ սպանվածներ կան, թե ոչ։

Խմբի երեք ընկերները հեռացան առանց կորուստի և միջադեպի։

Հուլիս 1943

2 հուլիսի, ուրբաթ առավոտ ժամը 9 անց 25.—Կռիշիում. Բարդեն փողոցում, երեք պարտիզաններ, զինված ատրճանակներով և նռնակներով, նրոնակի հարվածներով հարձակվեցին ՍՍ 34 զինվորներով և սպաներով բեռնված մի ավտոբուսի վրա։ Նռնակը նետվեց 10307 աբձանագրրվածի կողմից, պաշտպանությունը ապահովվեց 10010 և 10307 կողմի

Կլիշիի հայրենասեր ազգաբնակությունը ծափահարում էր վերադարձող մեր ընկերներին։ Գտնվեց մի սրիկա, որը փորձեց բռնել նոնակ նետողին, բայց սպանվեց երկրորդ պաշտպանության կողմից։ Բոշերը, որոնք այդ ժամանակ գտնվում էին ճանապարհի վրա, այդ միջամտությունից քաջալերված՝ մի քանի անգամ կրակեցին և վիրավորեցին երկրորդ պաշտպանին, որը ապաստանեց մի տան մեջ։ Ռոնապանը և տնվորները չուզեցին դավաճանել հերոս պարտիզանին։ Այդ ժամանակ գերմանացիները լրացուցիչ ուժեր բերին, մի քանի ջոկատներով շրջապատեցին տունը, գնդացիրներով, հրացաններով և գազով կովի գիրք ընդունեցին։ Նրանք տնվորներին սպառնացին տունը պայթեցնել։ Գործողության ղեկավար պարտիզանը, արձանագրված 10010, որն իր ընկերներին պաշտպանելիս վիրավորվել էր, այդ ժամանակ դուրս եկավ իր թաքստոցից և իր նոնակը բոշերի ջոկատի մեջտեղ նետելով՝ սպանեց ու վիրավորեց մի քանիսին և կրակելով իր վերջին փամփուշտները թշնամու վրա, ընկավ բարբարոս ներխուժողների առաջ որպես քաջարի հերոս, սքանչելի օրինակ ծառայելով իր զինակից եղբայրների համար։

5 հուլիսի, երկուշաբթի առավոտյան.—Պարտիզան արձանագրվածներ 10279 և 10233, զինված ատրճանակներով, Դինենի (Նոր Նահանգի) քաղաքի փողոցներից մեկում սպանեցին մի դավաճանի։ Երկու ընկերները իսկույն Փարիզ վերադարձան և մասնակցեցին այլ գործողությունների։

7 հուլիսի, չորեքշաբթի ժամը 18 անց 30.—Մոնրուժի էթաղյունի հրապարակում մի սրճարան-ճաշարան, ուր միմիայն գերմանացի ժանդարմներ էին հաճախում, նոնակների հարվածներով հարձակման ենթարկվեց երեք պարտիզանների կողմից։ Գործողությունը կատարելուց հետո պարտիզանները հեծանիվներով կանոնավոր ձևով ետ քաշվեցին։ Նոնակ նետողը մի նորեկ էր. դա նրա առաջին գործողությունն էր։ Պաշտպանությունն ապահովում էին 10288 և 10241 արձանագրվածները։

8 հուլիսի, հինգշաբթի առավոտյան ժամը 8 անց 30.—Բերտես և Մալզերբ բուլվարների անկյունում գտնվող զորանոցը երկու անգամ երկու նոնակներով հարձակման ենթարկվեց։ Նոնակներն ընկան (60—70) զինվորների մեջտեղը, որոնք ռապորտ էին լսում։ Եղան մի քանի սպանվածներ և վիրավորներ։ Նոնակ նետողները՝ 10288, 10287 և պաշտպանողները՝ 10280, 10214 հեծանիվներով հեռայան առանց վտանգի։

9 հուլիսի, ուրբաթ առավոտ.—Նուազի լը Սեկում գերմանացիների կողմից բռնագրավված մի տուն հարձակման ենթարկվեց երեք պարտիզանների կողմից. նոնակը նետվեց առաջին հարկի գահլիճը, որը լիքն էր զինվորներով և ենթասպաներով։ Եղան մի քանի սպանվածներ և վիրավորներ, նոնակ նետողը՝ 10247 և պաշտպանները՝ 10279 և 10253, հեծանիվներով ետ քաշվեցին։

10 հուլիսի, շաբաթ առավոտ.—Նուազի լը Շուայում մի զորանոց, որի բակում մի ջոկատ պատրաստվում էր դուրս գալու համար, երեք պարտիզանների կողմից նոնակների հարվածներով հարձակման ենթարկվեց։ Նոնակն ընկավ գերմանացիների մեջտեղը սպանելով և վիրավորելով մի քանիսին։ Նոնակ նետողը՝ 10253 և երկու պաշտպանները՝ 10233, 10247, հեծանիվներով վերադարձան առանց վտանգի։

11 հուլիսի, լուսադրացին.—Երեք պարտիզաններ (արձանագրվածներ՝ 10003, 10213 և 10812) Փարիզ Շերբուր գծի վրա գծից դուրս բերին գերմանական արձակուրդավոր զինվորներով բեռնավորված մի գնացք։ Պայթյունը ավեց իր արդյունքը նախքան շոգեքարշի մոտենալը, գնացքը իսկույն անշարժության մատնվեց։ Շոգեքարշը և առաջին վագոնները ջնջվեցին. հակառակ բոշերի անկանոն հրաձգության, պարտիզանները ետ քաշվեցին անկորուստ և կանոնավոր կերպով։

19 հուլիսի, առավոտյան.—Վանվ քաղաքի Սեպտեմբերի 4-ի փողոցում, նռնակներով և ատրճանակներով զինված չորս պարտիզաններ հարձակվեցին գերմանական մի ջոկատի վրա, երբ վերջինս մտնում էր ցուցահանդեսի պարկը։ Նռնակը պայթեց ջոկատի մեջտեղը, եղան մի քանի սպանվածներ և վիրավորներ։ Նռնակ նետող 10156 արձանագրվածը հեծանիվի վրա էր, մյուս արձանագրվածները՝ 10182, 10152, 10198—նրան պաշտպանում էին։ Գործողությունը բնակչության մեջ առաջ բերեց խոր գոհունակություն։

21 հուլիսի, առավոտ.—Ատրճանակներով զինված երեք պարտիզանների կողմից սպանվեց հայրենասերների մատնիչ մի դավաճան։ Գործողությունը տեղի ունեցավ Մարի-Լուիզ փողոցում. գործողությունը կատարեցին՝ 10291, 10318 և 10305 արձանագրվածները։ Մեր ընկերները ետ քաշվեցին առանց արգելքի, չնայած փողոցի աշխույժ երթևեկությանը։

28 հուլիսի, գիշերը.—Երեք ընկերներ, արձանագրվածներ՝ 10003, 10306 և 10199, Փարիզ—Շատոտիերի երկաթգծի վրա գծից հանեցին մեկ գնացք. գծի բոլտերը հանելուց հետո նրանք 6 տրավերսների մեջտեղը դրեցին պայթուցիկ նյութեր։ Շոգեքարշը անցնելու մոմենտին տեղի ունեցավ պայթյուն, և գնացքի մի մասը, որ բեռնավորված էր ապրանքներով, բոլորովին դուրս եկավ գծից, մնացած մասը անշարժացավ իր տեղում։ Ընկերները հաջողությամբ վերադարձան։

28 հուլիսի, առավոտյան ժամը 9 անց 30.—Պոլ-Դումեր և Նոկոլո Պարի 16-րդ փողոցի անկյունում մեր ընտիր մի խումբ, բաղկացած չորս ընկերներից, զինված նռնակներով և ատրճանակներով, նռնակի հարվածով հարձակվեցին մեծ Փարիզի գեներալ-հրամանատարի բաց ավտոմոբիլի վրա։ Ավտոմոբիլի մեջ էին գեներալը, իր համհարզը և շոֆերը. նռնակը այնքան հաջող նետվեց, որ ընկավ երեք բոշերի մեջտեղը։ Պայթյունը տեղի ունեցավ ավտոմոբիլի ներսը և ավտոմոբիլն ցած գլորվեց իր մեջ ջախջախված օկուպանտներով։ Այս գործողության մասնակից արձանագրվածները՝ 10318, 10291, 10305 և 10161—բոլորն էլ հաջող վերադարձան։

Նռնակաձիգ արձանագրված՝ 10318, որ աչքի ընկավ իր քաջությամբ և սառնարյունությամբ, ինչպես նաև գործողության մասնակցած ամբողջ խումբը առաջադրվեց պատվի։

31 հուլիսի, երեկոյան.—Երեք պարտիզաններից բաղկացած մի խումբ, արձանագրվածներ՝ 10248, 10279, 10266—նռնակով հարձակվեցին գերմանացիների վեց սպաների մի խմբի վրա։ Բոլոր սպանները վիրավորվեցին։ Պարտիզանները, որոնք հեծանիվներով էին, հեռացան անվտանգ։

Օգոստոս. 1943

Փարիզ-Ռեմս գծի վրա, Ֆերտե-Միլոն կայարանի մոտ, գիշերը, վեց պարտիզաններ, զինված ատրճանակներով և անհրաժեշտ գործիքներով, գծից դուրս բերին գերմանացի արձակուրդավոր զինվորների մի գնացք։ Այս գործողությանը մասնակցեցին 10003, 10211, 10282, 10199, 10306, 10350 արձանագրվածները։ Ընկերները, հեղեղանման անձրևի տակ մինչև ոսկորները թրջված, հանեցին 15 տրավերսների բոլտերը, փայտաշերտերի պտուտակները և երկաթգիծը լայնացրին։ Գնացքը ամբողջապես գծից դուրս եկավ։ Վագոնները ջարդվեցին և ճզմվեցին մեկը մյուսի վրա։ Գերմանացի հարյուրավոր սպանվածներ և վիրավորներ մնացին տեղում։ Տեղում ձեռք բերված տեղեկությունների և կատարված ստուգումների համաձայն՝ զոհերի և բեկորների հայտարերման աշխատանքները շարունակվում էին դեռ հետևյալ օրը։

Երկաթգիծը մի ամբողջ օր չօգտագործվեց։ Պարտիզանների նահանջը կատարվեց լավագույն կարգով։

11 օգոստոսի, երեկոյան ժամը 22.—Նոր ընդունված երկու պարտիզաններ, զինված ատրճանակներով, գնդակի հարվածներով սպանեցին Մարսել բուքսրի հանրածանոթ գործակից դավաճան Ժոզե-գը Լապլասին։ Գործողություն տեղի ունեցավ Նե-բուլվարում՝ Պորտ Սենտ-Ուենի մոտ։ Մասնակցել են 10279 և 10247 արձանագրվածները։ Պետք է նշել այս երկու պարտիզանների քաջությունը, սառնարյունությունը, ինչպես նաև այդ հայրենասերների ատելությունը դավաճանների նկատմամբ։ 10279 արձանագրված ընկերը երեք գնդակ արձակեց այդ վաճառվածի վրա և գետին տապալեց նրան. երբ ուզում էր հեծանիվ նստել և հեռանալ, ընկերը լսեց, որ դավաճանը շարունակում է բղավել. նա վերադարձավ և արձակեց չորրորդ գնդակը, ասելով. «Դե, այսպես, այլևս չես ժատնի»։ Այս գործողությունից հետո երկու ընկերները հաջող ետ դարձան։

13 օգոստոսի, ժամը 14 անց 30.—Հինգ երիտասարդ պարտիզաններ, զինված ատրճանակներով և նռնակներով, Մոնրուժում, Կոլ-Ժիլոն և Ֆուտենբերգ փոքրիկ փողոցների անկյունում հարձակվեցին գերմանական մի ջոկատի վրա. ջոկատը առջևից և ետևից պաշտպանվում էր ձեռքի գընդացիրներով զինված չորս զինվորներով, բայց այդ ոչնչով չխանգարեց մեր երիտասարդ ընկերներին նետել իրենց նռնակները ջոկատի ժեջտեղը և առանց կորուստի ետ քաշվել։

Գործողությանը մասնակցեցին 10293, 10288 և 10241 արձանագրրվածները։

Այն միջոցին, երբ նռնակ նետողը պատրաստելով իր նռնակը, քայլերն ուղղեց դեպի գերմանական ջոկատը, մի տնտեսուհի նույն ուղղությամբ հետևեց նրան։ Մեր ընկերը անչափ սառնարյունություն ցույց տալով՝ կանգնեցրեց տնտեսուհուն և առաջարկեց նրան տուն վերադառնալ։ Բարի կինը մի հայացք գցեց նռնակ սեղմած ձեռքի և ապա բոլորի վրա, ամեն ինչ հասկացավ և քաջալերական ժպիտով անհետացավ մի տան դռան ետևը։

13 օգոստոսի, լուսաբացին.—Գիշերը չորս պարտիզաններ, զինված ատրճա-

նակներով և անհրաժեշտ գործիքներով, երկու ժամ աշխատեցին երկաթգիծը քանդելու վրա, հանեցին համարյա բոլոր տրավերսների բոլտերը, բայց վատ կողմնորոշման և անհարատև լինելու հետևանքով վերադարձան, չկարողանալով քանդել գիծը։

Առողջ քննադատությունից հետո ամբողջ խումբն ընդունեց իր սխալները և ղեկավարության առաջ խոստացավ իսկույն նորից դուրս գալ և լիովին հաջողեցնել գործը։ Նրանք կատարեցին իրենց խոսքը։ Այդ գործողությանը մասնակցեցին 10601, 10191, 10306, 10282 արձանագրվածները։

17 օգոստոսի, գիշերը.—Մոնտրոի-Լոնգվիլ գծի վրա վեց պարտիզաններ քսան րոպեում երկաթգծի մի տեղամասի բոլոր բոլտերը հանեցին և ժամը 5-ին խորտակեցին արևելքից եկող գերմանական արձակուրդավոր զինվորների մի գնացք։

Մեր ստուգման համաձայն՝ 'խորտակումը լրիվ հաջողվել է։ Կան հարյուրավոր սպանվածներ և վիրավորներ։ Շոգեքարշը և մի քանի վագոններ ոչնչացել են։ Կեսօրվա մոտերը գիծը դեռ խճողված էր մարդկային դիակներով և դանաղան նյութերով։

Հակառակ շրջակա բնակչության նկատմամբ բոլերի գործադրած վայրենի ռեպրեսիաների, ամբողջ բնակչությունը խանդավառությամբ է մեկնաբանում այս գործողությունը։

Այս գործողությանը մասնակցել են 10020, 10199, 10351, 10306, 10211 արձանագրվածները և մեկ նորակոչիկ։

Ղեկավարությունը շնորհակալություն հայտնեց ամբողջ խմբին։

19 օգոստոսի, առավոտյան ժամը 10-ին.—Մոնսո պարկում մի հատուկ խումբ ատրճանակի գնդակներով սպանեց մի բոշ մայորի։ Այդ վայրը գերմանացիները շատ էին հաճախում։ Թաղամասի բոշ ժանդարմները կրակելով նետվեցին հետապնդելու մեր ընկերներին։ Հակառակ այս դժվարություններին, կրակող ընկերը մեր պաշտպանության և մի անցորդ հայրենասերի օգնությամբ կարողացավ փախչել ողջ և անվնաս. այդ անցորդը մեր ընկերոջը վերցրեց իր հեծանիվի վրա և հեռացրեց գործողության վայրից։

Այս գործողությանը մասնակցեցին 10318, 10305, 10161, 10608 արձանագրվածները։

20 օգոստոսի, գիշերը՝ լույս 21-ի առավոտ.—Ռեյմս-Բետել երկաթգծի վրա չորս պարտիզաններ, զինված ատրճանակներով և գործիքներով, խորտակեցին ռաղամաթերքով բեռնված ապրանքատար մի գնացք։

Շոգեքարշը և 19 վագոն ամբողջապես դուրս եկան գծից։ Այս գործողությանը մասնակցեցին 10282, 10601, 10191, 10306 արձանագրվածները։

20 օգոստոսի, առավոտյան.—Երեք պարտիզաններ, զինված ատրճանակներով, սպանեցին շաբաթային բարձրաստիճան մի գերմանացի սպայի։ Գործողությունը տեղի ունեցավ Նեոյիում Լուի-Ֆիլիպ փողոցի և Ռուլ պողոտայի անկյունում. այդ տեղով անցնող գերմանացի զինվորները ոչ մի դիմադրություն ցույց չավին։ Գործողությանը մասնակցեցին

10266, 10279, 10254 արձանագրվածները, որոնք վերադարձան առանց կորուստի։

25 օգոստոսի, ժամը 13-ին։—Չորս պարտիզաններ, զինված ատրճանակներով և նռնակներով, հարձակվեցին գերմանական զինվորներ փոխադրող մեկ ապրանքատար ավտոմեքենայի վրա։ Գործողությունը տեղի ունեցավ Բուլոնյ-Բիանկուրում և հաջողվեց։ Նետված նռնակը պայթեց ավտոմեքենայի ներսը։ Մեր բոլոր ընկերները վերադարձան։

Գործողությանը մասնակցեցին 10293, 10241, 10288 և 10604 արձանագրվածները։

26 օգոստոսի, ժամը 16-ի մոտերը։—Երեք պարտիզաններ, զինված ատրճանակներով, Սեն Ժերմեն-ան-Լեյում սպանեցին մեկ սպայի։ Թշնամուն հասցված այս հարվածից բացի, պետք է մատնանշել և այն առկունությունը-հարատևությունը, նախաձեռնությունը և ընկերական ոգին, որ ցույց տվեց այս դեպքում ամբողջ խումբը։

Ընկերները ժամը 13 անց 30-ին մեկնեցին, որպեսզի մի գործողություն կատարեն։ Բայց անձրևի պատճառով նպատակադրումը չէր հաջողվում։ Մեկ ժամ սպասելուց հետո, մինչև ոսկորները թրջված, մեր պարտիզանները որոշեցին առանց մի գործողություն կատարելու չվերադառնալ, ռազմական ժատերիալներ ետ չտանել։ Երեկոյքին լավ ծանոթ չլինելով հանդերձ, մեր ընկերները նստեցին իրենց հեծանիվները և գնացին դեպի մի ռազմականացած վայր, մի պատահական նպատակի հետևից։ Երկու ժամ որոնումներից հետո նրանք տեսան մի սպայի, որը հեծանիվով գալիս էր իրենց հանդեպ։ Առանց մի վայրկյան կորցնելու, մեր ազաները գրավեցին փողոցի առաջին պատահական անկյունը, հարձակման և պաշտպանության դիրք բռնեցին։ Երբ սպան իրենց թաքստոցին հասավ, խփեցին։ Թեև ընկերները լավ ծանոթ չէին այդ գյուղին, որտեղ գործում էին, բայց և այնպես նահանջը կատարեցին շատ կանոնավոր կարգով։ Ետ քաշվելու ժամանակ, գործողության վայրից մի փոքր հեռու, հեծանիվի կամերաներից մեկը պայթեց։ Որպեսզի աղեսի պատահած ընկերոջը մենակ չթողնեն դաշտում, ընկերները, հեծանիվները տեղավորելով մի սեղ, վերադառնում են ոտքով։

Զափազանց հոգնած, ուժասպառ էին, բայց երջանիկ, որ կատարել են իրենց պարտիզանի և հայրենասերի պարտքը։ Բոլոր ընկերները վերադարձան անվնաս։

Հետևյալ օրը հեծանիվները բերվեցին և հանձնվեցին նրանց։ Այս գործողության մասնակցեցին 10241, 10288, 10604 արձանագրվածները։

28 օգոստոսի, գիշերը.—Փարիզ—Տրուա գծի վրա չորս պարտիզաններ, բոլորը զինված, խորտակեցին մի ապրանքատար գնացք։ Շոգեքարշը և հինգ վագոն ամբողջապես ոչնչացան։ Գործողության և վնասների ստուգումը կատարվեց մեր իսկ ժիլոցներով։ Այս գործողությանը մասնակցել են չորս ընկեր՝ 10306, 10191, 10262 և 10601 արձանագրվածները։

№ 2

21 փետրվարի 1944 թ., Ֆրեն

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՄԵԼԻՆԵ, ԻՄ ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ՈՐԲՈՒԿՍ

Մի քանի ժամից հետո այլևս չեմ լինելու այս աշխարհում։ Շուտով, այս կեսօրից հետո, ժամը 15-ին կգնդակահարվենք։ Իմ կյանքում սա ինձ պատահում է որպես մի դժբախտ դեպք. դրան չեմ հավատում, սակայն և այնպես ես դիտեմ, որ այլևս երբեք քեզ չեմ տեսնելու։

Ի՞նչ կարող եմ քեզ դրել, իմ մեջ ամեն ինչ անորոշ է և միաժամանակ շատ պայծառ։ Ես մտել էի ազատության բանակը որպես կամավոր զինվոր և ես մեռնում եմ երկու մատ հեռու հաղթանակից և նպատակից։ Երջանկություն նրանց, ովքեր պիտի ապրեն մեզանից հետո և պիտի վայելեն վաղվա խաղաղության և ազատության քաղցրությունը։

Վստահ եմ, որ ֆրանսիական ժողովուրդը և ազատության համար բոլոր պայքարողները պիտի դիանան արժանավայել կերպով պատվել մեր հիշատակը։ Մեռնելու պահին հայտարարում եմ, որ ես ոչ մի ատելություն չունեմ գերմանական ժողովրդի դեմ և ոչ ոքի դեմ, յուրաքանչյուրը կստանա իր արժանի պատիժը կամ վարձատրությունը։ Պատերազմից հետո, որ այլևս երկար չպիտի տևի, գերմանական ժողովուրդը և մյուս բոլոր ժողովուրդները պիտի ապրեն խաղաղ կերպով և եղբայրաբար, երջանկություն բոլորին։

Խորապես ցավում եմ, որ չկարողացա քեզ երջանկացնել։ Ես շատ էի ցանկանում քեզանից մի զավակ ունենալ, ինչ որ դու մշտապես ցանկանում էիր։ Խնդրում եմ քեզ պատերազմից հետո անպատճառ ամուսնանալ և մի երեխա ունենալ իմ պատվի համար և իմ վերջին կամքը կատարելու համար։ Ամուսնացիր մեկի հետ, որ կարողանա քեզ երջանկացնել։

Բոլոր ունեցածներս կտակում եմ քեզ, քո քրոջը և նրա որդիներին։ Պատերազմից հետո դու կկարողանաս, որպես իմ կինը, սահանալ պատերազմական թոշակ, որովհետև ես մեռնում եմ որպես Ֆրանսիայի ազատագրության բանակի կանոնավոր զինվոր։ Պատերազմից հետո, բարեկամներիս օգնությամբ, որոնք հոժարությամբ պիտի ուզենան պատվել ինձ, հրատարակել ամբ իմ պոեմները և այն գրվածքները, որոնք արժանի են կարդացվելու։ Եթե հնարավոր է՝ իմ հիշատակներս տար Հայաստան իմ ազգականներին։

Քիչ հետս ես իմ 23 ընկերների հետ կմեռնեմ քաջությամբ և հոգու անդորրությամբ մի մարդու, որի խիղճը շատ հանգիստ է, որովհետև ես անձամբ ոչ ոքի ֆաս չեմ հասցրել և եթե արել եմ, ես այդ արել եմ առանց ատելության։ Այսօր արևոտ օր է, արևին և իմ այնքան սիրած գեղեցիկ բնության նայելով է, որ ինձք բարով կասեմ կյանքին և ձեզ բոլորիդ, իմ շատ սիրելի կին և իմ շատ սիրելի բարեկամներ։ Ես ներում եմ բոլոր նրանց, որոնք ինձ ֆաս են հասցրել կամ ցանկացել են ինձ ֆաս հասցնել, բացառությամբ նրան, որ մեզ դավաճանեց իր կաշին փրկելու համար, և նրանց, որոնք մեզ ծախեցին։ Շատ ուժով համբուրում եմ քեզ, ինչպես նաև քրոջդ ե բոլոր բարեկամներին, որոնք ճանաչում են ինձ հես-

վից կամ մոտից, կրծքիս վրա սեղմում եմ բոլորիդ. մնաք բարով։ Քո բարեկամ, քո ընկեր, քո ամուսին

ՄԱՆՈՒՇՅԱՆ ՄԻՇԵԼ ջանիկդ։

Հ. Գ.—Ես Գլեզանս փողոցի մեր տան համբրուկում ունեմ 15 հազար ֆրանկ, եթե կարող ես վերցնել, վճարիր իմ պարտքերը և մնացածը նվիրիր Հայաստանին։

№ 3

Ազգային ճակատ Ֆրանսիական ներքին ուժեր

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱԶԱՏ ՀՐԱՁԻԳՆԵՐ, ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Փարիզ, սեպտեմբերի 5, 1944 թ.

Վկայագիր[1]

Ես ներքո ստորագրյալս, գնդապետ Իոդուեն, Ֆրանսիական ազգային ազատ հրաձիգների ու պարտիզանների ռազմական հրամանատար, վկայում եմ, որ՝

Ֆ. Ա. Հ. Գ.[2] Հրամանատար Մանուշյան Միսաքը

1942 թ. նոյեմբերին կամավոր զինվորագրվել է Ֆ. Ա. Հ. Գ. շարքերում, ուր շուտով նա դառնում է խմբի և ապա ջոկատի հրամանատար. և որպես մարտնչող վտարանդի բարձրացվում է Փարիզի շրջանում կռվող Ֆ. Ա. Հ. Գ. վտարանդիների բոլոր խմբերի հրամանատարի աստիճանին։

Նա կազմակերպում և մասնակցում է բազմաթիվ գործողությունների գերմանացի ներխուժողների դեմ և նրանց վարձկան դավաճանների դեմ։

Նա, գեստապոյի կողմից ձերբակալվելով՝ գնդակահարվել է 1944 թվի փետրվարի 21-ին։

Լինելով մեծ քաջության տեր մարդ, նա մեր երկրին մատուցել է անգնահատելի ծառայություններ և արժանացել է մեր հայրենիքի պատվին։ Այս պատճառով 1944 թվի սկզբին նա Ալժիրի կառավարության կողմից նշանակվեց պատվավոր կապիտան։

Ի սեղիշՀ. Ա. Հ. Գ.-ների Ռազմական Ազգային Կոմիտեի
Ազգային Ռազմական հրամանատար՝ գնդապետ ԻՈԴՈՒԵՆ

Կ ն ի ք
Ֆ. Ա. Հ. Գ. Ռազմական ազգային
Կ ո մ ի տ ե

[1] Վկայագրի օրիգինալը գտնվում է ՀՍՍՌ ԳԱ Պատմության Ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվում։

[2] Ֆրանսիական ազատ հրաձիգներ ու պարտիզաններ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱԶԱՏ ՀՐԱՁԻԳՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԱԶԳԱՑԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԱՄՈՑԻԱՑԻԱ)

Սենայի կենարոն
Սեն-Լազար փողոց 23—Փարիզ 9-րդ
Փարիզ, 9 մարտի 1945.

Տիկին Մանուչյան
Օմեր փողոց 19.
Փարիզ 3-րդ

Սիրելի ընկերուհի[1]

Խնդրում ենք ներփակ զրույցամբ ստանալ մի վկայագիր, որը վկայում է այն մասին, որ Ձեր ամուսին՝ հրամանատար Մանուչյանը գտնվում է Ֆրանսիացի ազատ հրաձիգների և պարտիզանների շարքերում, և մի վկայագիր՝ ձեզ իսկ վերաբերող, որտեղ վկայվում է, որ դուք անդամ եք եղել Ֆրանսիական ներքին ուժերին։

Մենք պատրաստ ենք, սիրելի ընկերուհի, ձեզ տալու մեր հրամանատարության սահմանում բոլոր այն տեղեկությունները կամ բոլոր այն փաստաթղթերը, որոնք ձեզ օգտակար կլինեն։

Մինչ այդ խնդրում ենք ընդունել, սիրելի ընկերուհի, մեր հայրենասիրական զգացմունքների հավաստիքը։

Ի տեղի նահանգային պատասխանատուի

Քարտուղարուհի (Ստորագրություն)

Կ ն ի ք

[1] Օրիգինալը գտնվում է ՀՍՍՌ ՊԱ Գաղտնության Խնդիրների հայրենական գաղթական գաղութի գաղտնության կոմիտեի արխիվում։